



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 31 ՄԱՐՏ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.  
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ՛ ինձի:  
Ամբողջութեամբ մաքրէ՛ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ՛:  
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չ'ելլեր:  
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,  
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:  
Ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես.  
Իրաւացի ես, ինչ պատիժ ալ սահմանես:  
Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,  
լուա զիս, եւ ձիւնէն ատելի մաքուր պիտի ըլլամ:  
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,  
նոր եւ ուղիղ հոգի դիմ իմ ներսիդիս:  
Ներկայութենէդ մի՛ գրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:  
Փրկութեանդ ցնծութիւնը քու ինձի,  
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:  
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:  
Եթէ գոհ կամենայիր՝ պիտի մաքուր ցանէի, բայց ողջակէզ դուն չես ուզեր:  
Ուզած գոհդ զոչումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,  
հետեւաբար մի՛ մերժեր զոչումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,**  
**Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ՅՈՒԴԱ ԵՒ ԹԱՄԱՐ (38:1-30)**

Յովսեփի պատմությունը պահը մը կ'ընդհատուի Յուդայի եւ Թամարի պատմությունով: Պատմություն մը որ կրնայ գայթակղութեան առիթ ըլլալ, բոլոր անոնց որոնք ծանօթ չեն այդ օրերու ընկերային դրուածքին: Անոր համար ալ պէտք է նկարի ունենալ այս հատուածը բացի իր պատմական խորքէն, նաեւ անոր մէջ տեսնելու հոգեւոր իմաստը: Միւս կողմէ, այս դրուագով նաեւ կ'ուզէ ցոյց տալ սերունդներուն յառաջացման բացառութիւնը, որմէ պիտի գար Քրիստոս:

Այս հատուածը մեզի կը ներկայացնէ Յուդան, որ արդէն ամուսնացած եւ երեք զաւակներու փրկող, որոնք արդէն ամուսնութեան փարիքի են հասած: Յուդայի զաւակներէն անդրանիկը՝ Էր, որ ամուսնացաւ Թամար անունով աղջկայ մը հետ: Բայց ան չար ըլլալուն Աստուած մեռցուց: Երկրորդ զաւակն ալ՝ Օննան ան ալ իր անհնազանդութեան պատճառով մեռաւ: Որովհետեւ անոր փրութեամբ պարտականութիւն մը, որ սակայն անհնազանդ եղաւ այդ պարտականութեան նկատմամբ, «**Օննան գիտցաւ որ սերունդը իրենը պիտի չըլլայ, անոր համար երբ իր եղբօր կնոջը կը մտնէր, սերմը գետին կը թափէր, որպէսզի եղբօրը սերունդ չտայ**»:

Բայց «այս ըրած բանը Տիրոջ առջեւ գէշ երեւցաւ ու զանիկա ալ մեռցուց»:

Ի վերջոյ, այս երեւոյթը Յուդայի համար այնպէս մը թուեցաւ, որպէս թէ Թամար ինք է պատճառը իր երկու զաւակներուն մահուան, անոր համար ալ իր երրորդ որդին չուզեց տալ, ըսելով. «**Չըլլայ որ աս ալ իր եղբայրներուն պէս մեռնի**»:

Թամար ազգութեան իսրայէլացի չէր, բայց կ'ուզէր որ աստուածային օրհնութենէն բաժին ունենալ, ահա անոր համար ալ կ'որոգէրէ այնպիսի ձեւ մը, որպէսզի այդ սերունդը ապահովուի: Մինչեւ իսկ կենակցելու աներօր՝ Յուդայի հետ: Այս դէպքը նաեւ ցոյց կու տայ թէ ինչպէս Յուդա նաեւ իր կարծիքը փոխեց Թամարի նկատմամբ, եթէ երբեք սկիզբը այնպէս կը կարծէր թէ Թամար ինքն է պատճառը իր զաւակներուն մահուան, որուն համար ալ վախցաւ երրորդ զաւակը տալու, ընդհակառակը այս արարքով անդրադարձաւ որ իր զաւակներն էին, որ իրենց չար ընթացքի պատճառով մահացան: Ահա հասաւ պահը, որ Յուդա անդրադառնայ իր արարքին եւ խոստովանի իր մեղքը, որ նաեւ պատճառ եղած էր Թամարի որդեգրած ձեւին:

Յուդան իր սխալը դարմանելու համար որդեգրեց այն կերպը, որ Թամարը իրեն կնութեան առաւ, բայց «անգամ մըն ալ չգիտցաւ զանիկա», որովհետեւ իր առաջի զաւակներուն կինն էր, եւ իբրեւ երկրորդ կին չառաւ, որովհետեւ ան իր նոր զաւակներուն մայրն էր:

Իսկ թէ ի՞նչ է այս դրուագին բարոյական դասը: Մեղքի մը, սխալի մը, թերացումի մը պատճառը եղողը, ինքն է այդ մեղքի պարասխանապարտութիւնը կրողը: Թամարը, այս պարագային, եթէ մեղաւոր էր, բայց այդ մեղաւորութեան առիթ տուողը, պարասխանապարտ Յուդան ինքն էր, բայց ան կը խոստովանի եւ իր վրայ կ'առնէ այդ պարասխանապարտութիւնը: Սա կը ստրվեցնէ, թէ ան որ իր սխալը կը ճանչնայ եւ կը սրբագրէ, նաեւ այդ սխալին դարմանը կրնայ գտնել, թէ՛ մարդոց քով եւ թէ՛ Աստուծոյ քով: